

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ*

Մարքսիստական լեզվաբանության հիմնական խնդիրներից մեկն է տեղական (տեղիտո-րիալ) բարբառների ուսումնասիրությունը։ Ամեն մի լեզվի պատմության ուսումնասիրու-թյունը լրիվ և ամբողջական չի կարող լինել առանց նրա բարբառների ուսումնասիրության։

Հայոց լեզուն տեղիտորիալ բարբառներով հարուստ լեզուներից է. այդ բարբառների զգալի մասը անվերադարձ կերպով արդեն անցել են պատմության գիրկը։ Ժամանակակից հայերենի համընդհանուր խոսակցական լեզու դառնալը ինքնին նպաստում է, որ նույն ճանապարհը բռնեն նաև հայ մյուս բարբառները։ Այս հանգամանքը շատ պարզ է դարձնում, որ բարբառների ուսումնասիրությունն այժմ հայագիտության հույժ հրատապ խնդիրներից է։ Բարբառների լեզվական իրողությունների ուսումնասիրությունը հնարավորու-թյուն կտա ոչ միայն ամբողջացնել հայոց լեզվի պատմությունը, պարզաբանել հայ ժողովրդի, նրա լեզվի ծագման շատ հարցեր, այլև գրել հայերենի լիակատար պատմական բերականու-թյունը, հայ բարբառների ամբողջական պատմությունը։

Հայ բարբառների ուսումնասիրության բնագավառում առանձնապես մեծ գործ է կա-տարել բազմավաստակ հայագետ պրոֆ. Հր. Աճառյանը։ Նա իր գիտական գործունեության սկզբնական շրջանից իսկ մեծ ուշադրություն է դարձրել բարբառների, նրանց լեզվական իրո-ղությունների վրա։ Պատմության գիրկն անցած հայ շատ բարբառներ ու խոսվածքներ հայագի-տությանը ճանաչ են դարձել շնորհիվ պրոֆ. Հր. Աճառյանի ուսումնասիրությունների։ Իր հա-րուստ ու բազմաբովանդակ գիտական գործունեության ընթացքում՝ պատմագիտական, բանա-սիրական, ընդհանուր լեզվաբանական, ստուգաբանական և համեմատական բազմահատոր ուսումնասիրություններից բացի, պրոֆ. Հր. Աճառյանը կատարել է հայ շատ բարբառների (Ղարաբաղի, Նոր-Նախիջևանի, Մարաղայի, Ագուլիսի, Նոր-Զուղայի, Պոլսահայ, Համշենի, Վանի) մենագրական ուսումնասիրությունները, անխնայ կերպով հավաքել բարբառային բա-ռերը, կազմել նրանց բառարանը։

Բարբառների լեզվական իրողություններն անհետք կորուստից փրկելու գործում շատ արժեքավոր և շնորհակալ գործ է նախաձեռնել Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտը՝ առանձին սերիայով հրատարակելով բարբառագիտական նյութերը։ Վերջերս ԳԱ հրատարակությամբ լույս է տեսել այդ սերիայի առաջին համարը՝ պրոֆ. Հր. Աճառյանի Առտիալի բարբառի ուսումնասիրությունը։

Առտիալի՝ Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի հայերի բարբառը անցյալում ևս գրավել է հայագետների ուշադրությունը. այդ բարբառի մասին առաջին անգամ տեղեկու-թյուն է տվել Ա. Այտընյանն իր «Քննական բերականություն» աշխատության մեջ¹։

Ինչպես հայտնի է Ա. Այտընյանը, հիմք ընդունելով բարբառների միայն տեղիտորիալ հատկանիշը և անտեսելով նրանց ձևաբանական հատկանիշները, հայ բարբառները բաժանել է չորս խմբի։ Այդ խմբերից փրորգը անվանել է արևմտյան, Լեհաստան — Առտիալ և տվել նրա պատմության ու բերականության համառոտ նկարագիրը։ Այտընյանի կարծիքով այդ բարբառը «Հին կամ նախնեաց ռամկորեն մըն է... սկզբնաբար Անեցի գաղթականության լե-զուն» և ժամանակի ու տարածության այդ խորը հեռավորության մեջ պահպանվել է գրեթե անաղարտ վիճակում։

Առտիալի բարբառը ոչ ամբողջությամբ, այլ նրա մի հատվածի՝ Լեհահայ խոսվածքի ուսումնասիրությունը կատարել է Լեհ հայագետ Հանուշը²։ Հեղինակը գտնելով, որ դեռևս 5-րդ

* Հ. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953։

¹ Ա. Այտընյան, Քննական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լե-զուի, Վիեննա, 1886, էջ 166, 180—193։

² Hanurz, „Sur la langue der Arméniens polonais. Cracovie, 1866 և „Lautlehre der Polonisch-arm. Mundart von Kutj in Gollizten“, Wien, 1899, որ հրատարակել է Զ. Մյուլլերը հեղինակի մահից հետո։

դարում գրարարի կողքին եղել են բարբառներ, հայ բարբառները բաժանում է 2 ճյուղի՝ արևելյան և արևմտյան, նկարագրում է այդ ճյուղերի հնչյունական տարբերությունները, քննադատում Մ. Բժշկյանի «Ժանապարհորդություն ի Լեհաստան» աշխատությունը, որը հիմք է ծառայել Ա. Ալտրնյանին և Ք. Պատկանյանին բարբառը ուսումնասիրելիս, գտնելով, որ այդ աշխատությունը հավաստի աղբյուր չի հանդիսանում բարբառի իրողություններն ուսումնասիրելու համար, այդ պատճառով ինքը անձամբ գնացել է Կուտի, լսել կենդանի խոսքը և բավական մանրամասն ուսումնասիրել այդ խոսվածքի հնչյունաբանությունն ու բառարանը:

Առտիալի բարբառի մյուս հատվածի՝ Սուշավայի խոսվածքի, ինչպես և ամբողջ բարբառի համառոտ նկարագիրը տրվել է դարձյալ Հր. Աճառյանի կողմից (Բազմավեպ, 1899 թ., էմիսյան Աղագրական ժողովածու, հատոր Ը, 1911 թ.):

Վերը հիշատակված երեք աշխատություններն էլ չեն հանդիսանում Առտիալի բարբառի ամբողջական ուսումնասիրությունը:

«Քննություն Առտիալի բարբառի» աշխատության մեջ պրոֆ. Հր. Աճառյանն իրեն հատուկ հմտությամբ ու մանրակրկիտությամբ հավաքել ու ուսումնասիրել է այդ բարբառի ոչ միայն տարբեր խոսվածքների ընդհանուր իրողությունները, այլև նրանց տարբերություններն ու առանձնահատկությունները Աշխատության ներածական մասում, տալով մատենագիտական և ընդհանուր արժեքավոր տեղեկություններ, բուն ուսումնասիրության մեջ հանգամանորեն քննության է առել բարբառի հնչյունաբանությունը, ձևաբանությունը, բառակազմությունն ու բառարանը:

Հնչյունաբանության բաժնում (էջ 18—128) մանրամասնորեն քննության է ենթարկել ձայնավոր, երկրաբառ, բաղաձայն հնչյունների փոփոխությունները, նրանց սղումն ու տեղափոխությունը, անկումն ու հավելումը, առնմանության և տարնմանության օրենքների հիման վրա կրած փոփոխությունները: Բարբառի հնչյունական երևույթներից առանձնապես հետաքրքրական է այն, որ աւ, էւ, իւ, օւ երկրաբառներն արտասանվում են մոտավորապես ալնպես, ինչպես հին հայերենում, էօ (ö), իօ (ü) բմայնացած ձայնավորներ հանդիպում են միայն փոխառյալ բառերում, բաղաձայնական համակարգը եռաստիճան է՝ ձայնեղ, շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ:

Ձևաբանության բաժնում (էջ 129—184) ուսումնասիրված է բարբառի հոգնակերտ մասնիկները, նրանց ծագումը, թեքվող խոսքի մասերը, նրանց հոլովումն ու խոնարհումը, չթեքվող խոսքի մասերը:

Այս բաժնից ընթերցողին ավելի պարզ է դառնում այն ընդհանուրը, որ կա նկարագրվող բարբառի և հայ մյուս, հատկապես «Կը» ճյուղի բարբառների միջև, ինչպես նաև այն ինքնուրույնը, սեփականը, որ հատուկ է Առտիալի բարբառին: Այսպես, օրինակ, ուսումնասիրությունից պարզվում է, որ Առտիալի բարբառում գոյականները, անկախ այն բանից, թե եզակի թվում ինչ հոլովման են պատկանում, հոգնակի թվում «Կը» ճյուղի մյուս բարբառների նման մեծ մասամբ ստանում են «ու» հոլովիչը, եզակի սեռականում գոյականները, ինչպես երիվում է բերված նմուշներից, «Կը» ճյուղի մյուս բարբառների նման ստանում են ն հոգը (սեթն պարտի Յովաննեսին փեսին, էջ 203), իսկ որոշյալ առումով գործածվելիս հայցական հոլովում ստանում են զ նախդիրը: Դասական թվականները նոր-նախիչեսնի բարբառի նման կազմվում են ում մասնիկով ((էրգուսում, յորսում), առաջին, երկրորդ դեմքերի անձնական դերանունները սեռական հոլովում ստանում են զ նախդիրը (զիմ, զքու) և իբրև հատկացուցիչ գործածվելիս պահպանում են իրենց զ-ն եզակի թվի բոլոր հոլովներում, հոգնակի թվի միայն հայցական հոլովում: Բայերը անորոշ դերբայում ունեն ել, ալ, ուլ վերջավորությունները (հետաքրքրական է, որ պահպանվել է հին հայերենի ուլ վերջավորությամբ անորոշը), սահմանական եղանակի անցյալի անկատար և ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակների եզակի երկրորդ դեմքերում բայերը Ե-ի փոխարեն, ներկա ժամանակի համապատասխան դեմքի անալոգիայով, ստանում են ս դիմային վերջավորությունը (կի սիրես, կի սիրէիք, սիրիխ), սահմանական եղանակը շունի անցյալի ապառնի, թեև ունի ապառնի, որը կազմվում է բիդօր կամ բի մասնիկներով:

Բառակազմության բաժնում հեղինակը քննության է առել բարդ բառերը, նրանց կազմությունը, ընդգրկել բարբառի բնիկ, թե փոխառյալ բառակազմական ածանցներն ու նրանցով կազմված բառերը: Հայոց լեզվի բառային կազմի ուսումնասիրության համար առանձնապես մեծ նշանակություն ունեն ռուսերենից, լեհերենից, ռումիներենից և հունգարերենից Առտիալի բարբառում մուտք գործած բառերը, որոնք հեղինակի կողմից հավաքվել են մեծ համբերատարությամբ և ղեկավարել աշխատության մեջ: Աշխատության վերջում տրված

է տարիներ ընթացում հայ պարբերական մամուլից և սեփական գրառումներով շանասիրությամբ հավաքած բարբառային ընդարձակ տեքստեր, որոնց զգալի մասը, հատկապես պարբերական մամուլից վերցրածները, ցավոք սրտի վերատպվել են նույնությամբ, չեն ենթարկվել գիտական տառադարձության:

Երախտովող աշխատության բովանդակության համառոտ այս շարագրումն իսկ ցույց տալիս, թե որքան մեծ է աշխատության ընդգրկած նյութի ծավալը և համոզում այն բանում, որ հեղինակը ամբողջովին սպառել է բարբառի լեզվական իրողությունները: Բարբառի փաստական նյութերի հարուստ կուտակումը, դրանց գիտական ճիշտ վերլուծումն ու քննությունը հեղինակին հնարավորություն են տվել հանգել ճիշտ, անառարկելի եզրակացությունների:

Եթե նկատի չունենանք տպագրական հետևյալ վրիպակները 1866 (էջ 5) փոխանակ 1886 (այդ թվին է տպագրվել Հանուշի աշխատությունը), բառեր (էջ 193) փոխանակ բառեր և veninum (էջ 197) փոխանակ venenum. ապա պետք է ասել, որ գրքի խմբագրական և հրատարակչական աշխատանքը կատարված է խնամքով և որակով:

«Քննություն Առտիալի բարբառի» աշխատությունը հանդիսանում է այդ բարբառի ամբողջական ուսումնասիրությունը. այն խոշոր ներգրում է հայ բարբառագիտության, հետևապես հայագիտության մեջ:

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ